

ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2024

ՀՈՒՆՎԱՐ - ՓԵՏՐՎԱՐ

ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍ 2

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՝ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարրերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույթի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: **Թեստ-գրքույթը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ճնարությունը:**

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանար պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ճնարություն: Պատասխանների ճնարութիւնը ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Մարդում ենք հաջողություն:

1 Ո՞ր ոսկորն է բացակայում գորտի կմախքում.

- 1) կողոսկրը
- 2) պարանոցային ողը
- 3) բազուկոսկրը
- 4) կոնքոսկրը

2 Թվարկված կենդանիներից ո՞րը չի պատկանում ժապավենաձև որդերի դասին.

- 1) եզան երիզորդը
- 2) էխինոկուլը
- 3) սրատուտը
- 4) խոզի երիզորդը

3 Ի՞նչ առանձնահատկություններ են քնորոշ երկաքիլավոր բույսերի դասի ներկայացուցիչների մեջ մասին.

- 1) տերևների զուգահեռացիոն ջղավորություն
- 2) առանցքային արմատային համակարգ
- 3) փնջաձև արմատային համակարգ
- 4) տերևների աղեղնացիոն ջղավորություն

4 Ինչո՞վ (ինչպե՞ս) է շնչում հիդրան.

- 1) թույլ զարգացած խոիկներով
- 2) տրախեաներով
- 3) պարկանման թոքերով
- 4) մարմնի ամբողջ մակերեսով

5 Ո՞ր միջատներն են զարգանում թերի կերպարանափոխությամբ.

- 1) մրջյունները
- 2) մեղունները
- 3) մորեխները
- 4) մոծակները

6 Ինչո՞վ են սմկերը նման բույսերին.

- 1) զուրկ են քլորոֆիլից
- 2) կուտակում են օլիկոգեն
- 3) արտազատում են միզանյութ
- 4) ունեն լավ արտահայտված բջջապատ

7

Ի՞նչը բնորդշ չէ քոչունների արյունատար համակարգին.

- 1) աջ փորոքից սկիզբ է առնում արյան շրջանառության փոքր շրջանը
- 2) ձախ փորոքից սկիզբ է առնում արյան շրջանառության մեծ շրջանը
- 3) ձախ նախասրտում ավարտվում է արյան շրջանառության մեծ շրջանը
- 4) առրտայի աջակողմյան աղեղի առկայությունը

8

Ի՞նչ դեր է կատարում լեղին մարդու օրգանիզմում.

- 1) նպաստում է ճարպերի էմուլսացմանը և ներծծմանը
- 2) բուլացնում է աղիների շարժողական ակտիվությունը
- 3) խթանում է նեխսման գործընթացները
- 4) արգելակում է մարսողական ֆերմենտների արտադրությունը

9

Ի՞նչ է տեղի ունենում մարդու օրգանիզմում միջավայրում ջերմաստիճանի անկման դեպքում.

- 1) լայնանում են մաշկի արյան անոթները և մեծանում է այնտեղ մղվող արյան քանակը
- 2) մաշկի արյան անոթները լայնանում են, արյան հոսքը արագանում է, մարմնի ջերմատվությունը մեծանում է
- 3) նեղանում են մաշկի մազանոթների լուսածերպերը, նվազում է մարմնի ջերմատվությունը
- 4) աճում է արյան հոսքը դեպի մաշկ, իսկ մարմնի ջերմատվությունը նվազում է

10

Մարդու օրգանիզմում որտե՞ղ են գտնվում պայմանական ռեֆլեքսների կենտրոնները.

- 1) ողնուղեղային հանգույցներում
- 2) վեգետատիվ նյարդային համակարգի հանգույցներում
- 3) ողնուղեղի գորշ նյութի հետևի եղջյուրներում
- 4) գլխուղեղի մեծ կիսագնդերի կեղևում

11

Մարդու օրգանիզմում ո՞ր գործառույթներն (գործառույթն) են դեկավարում կամքում գտնվող կենտրոնները.

- 1) կլում
- 2) օրգանիզմի ներքին միջավայրի հաստատունության պահպանում
- 3) ակնազնդերի և դիմախսաղի մկանների շարժումներ
- 4) ջերմակարգավորում

12

Մարդու զգայարանների ո՞ր կառույցներում չկան ընկալիչներ.

- 1) կլոր և ձվածև պարկիկներում
- 2) քթի և բերանի խոռոչների պատերին
- 3) խխունջում և կիսաբողոք խողովակներում
- 4) ձվածև (օվալածև) և կլոր պատուհաններում

13

Ի՞նչ նյութեր է պարունակում առողջ մարդու առաջնային մեզը.

- 1) միայն պլազմայի անօրգանական բաղադրիչներ
- 2) գյուկոզ, միզանյութ, միզաթթու, այլ օրգանական նյութեր և հանքային աղեր
- 3) պլազմայի բոլոր բաղադրիչներն առանց բացառության
- 4) պլազմայի որոշ բաղադրիչներ՝ միզագոյացումը կարգավորող հորմոններ, հակամարմիններ, միզանյութ

14

Ո՞ր պնդումն է սխալ մարդու լեյկոցիտների վերաբերյալ.

- 1) ունեն կորիզ, առաջանում են կարմիր ոսկրածուծում
- 2) քանակը կարող է ավելանալ սնունդ ընդունելիս
- 3) չափսերով ավելի փոքր են, քան էրիքրոցիտները
- 4) մեծ քանակությամբ կան թարախում

15

Մարդու ո՞ր անորթներում է երակային արյունը վերածվում զարկերակայինի.

- 1) արյան շրջանառության փոքր շրջանի մազանորթներում
- 2) օրգանիզմի բոլոր մազանորթներում և զարկերակներում
- 3) բոքային զարկերակներում և արյան շրջանառության մեծ շրջանի մազանորթներում
- 4) արյան շրջանառության մեծ շրջանի մազանորթներում

16

Ո՞ր պնդումն է ճիշտ վիտամին B₁₂ -ի վերաբերյալ.

- 1) հանդիսանում է էներգիայի աղբյուր, թերվիտամինոզի դեպքում խթանվում է ոռողովախնի սինթեզը
- 2) թերվիտամինոզի կամ ավիտամինոզի դեպքում զարգանում է թերի-թերի հիվանդությունը, ջրալույծ է
- 3) թերվիտամինոզի կամ ավիտամինոզի դեպքում զարգանում են մաշկի և լորձաթաղանթների խոցեր, ճարպալույծ է
- 4) ջրալույծ է, ավիտամինոզի դեպքում զարգանում է չարորակ սակավարյունություն

17 Ո՞ր օրգանին է հարում մարդու ենթաստամոքսային գեղձի պոչային հատվածը.

- 1) լյարդին
- 2) տասներկումատնյա աղուն
- 3) ստամոքսին
- 4) փայծաղին

18 Ո՞ր ածխաջուրն է պատկանում մոնոսախարիդներին.

- 1) ցելյուլոզը
- 2) օսլան
- 3) գալակտոզը
- 4) գլիկոգենը

19 Ո՞ր ապիտակուցն է մտնում միկրոխողովակների կազմության մեջ.

- 1) տուրուլինը
- 2) միոզինը
- 3) ֆիբրինը
- 4) կոլագենը

20 Ո՞ր հիվանդության հարուցիչը չի պատկանում այրոկարիոտներին.

- 1) խոլերայի
- 2) որովայնային տիֆի
- 3) պոլիոմիելիտի
- 4) անգինայի

21 Բջջի օրգանոիդներից քաղանթային կառուցվածքը չունեն.

- 1) ոիբոսոմները և բջջային կենտրոնը
- 2) վակուոլները և լիզոսոմները
- 3) ոիբոսոմները և Գոլցիի ապարատը
- 4) բջջային կենտրոնը և լիզոսոմները

22 Ի՞նչ է զարգանում սերմնասկզբնակից ծաղկավոր բույսերի կրկնակի բեղմնավորումից հետո.

- 1) պտղապատը
- 2) սերմը
- 3) սերմնամաշկը
- 4) պտուղը

23

Ինչո՞ւ է գենետիկական կողը համարվում միանշանակ և ունիվերսալ քանի որ՝

- 1) միևնույն ամինաթթուն կարող է գաղտնագրվել մեկից ավելի եռյակներով
- 2) բոլոր օրգանիզմներուն նույն եռյակները պայմանավորում են նույն ամինաթթուն
- 3) յուրաքանչյուր նույն եռյակների կարող է լինել միայն մեկ որոշակի եռյակի կազմում
- 4) գեների միջև կան «ընդհատումներ»

24

Ի՞նչ գործընթաց կարող է տեղի ունենալ նիտրիֆիկացման ընթացքում.

- 1) ազոտական թթվից ազոտային թթվի առաջացում
- 2) ամոնիակի օքսիդացում մինչև ազոտային թթու
- 3) ազոտական թթվի վերականգնում մինչև ամոնիակ
- 4) սպիտակուցի քայլայում՝ ամոնիակի առաջացումով

25

Ի՞նչ առանձնահատկություն ունեն գորտի բլաստուի քջիջները ութքջային փուլում.

- 1) տարբեր են կառուցվածքով, բայց նման են դեղնուցի քանակով
- 2) տարբերակված են
- 3) տարբերվում են չափսերով
- 4) նման են դեղնուցի քանակով, բայց չունեն ԴՆԹ և ՌՆԹ

26

Ո՞ր գեներն են կոչվում շղթայակցված.

- 1) հոմոլոգ քրոմոսոմների տարբեր զույգերում գտնվող գեները
- 2) մեկ քրոմոսոմում գտնվող գեները
- 3) առոտոսմների տարբեր զույգերում գտնվող գեները
- 4) սեռական քրոմոսոմների նույն լոկուսներում գտնվող գեները

27

Ո՞ր կենդանիների սեռական տարբերակումն է կախված արտաքին միջավայրի ջերմաստիճանից.

- 1) կոկորդիլոսների
- 2) մեղուների
- 3) մրջյունների
- 4) մողեսների

28

Ի՞նչ տիպի գամետներ կառաջացնի մուգ մարմին և սաղմնային թևեր ունեցող դրոզնֆիլ պտղաճանճը.

- 1) Ab, aB
- 2) ab
- 3) AB
- 4) AB, aB

29

Ի՞նչ է ստացվում երկինտերոզիզոտ առանձնյակի և հոմոզիզոտ դոմինանտ առանձնյակի խաչասերման արդյունքում՝ երկու ալելներից մեկի ոչ լրիվ դոմինանտության և գեների անկախ բաշխման դեպքում.

- 1) 2 ֆենոտիպային և 2 գենոտիպային ձևեր
- 2) 4 ֆենոտիպային և 4 գենոտիպային ձևեր
- 3) 2 ֆենոտիպային և 4 գենոտիպային ձևեր
- 4) 1 ֆենոտիպային և 4 գենոտիպային ձևեր

30

Մարդու ո՞ր հիվանդության պատճառն է առոտոսմներում գտնվող մուտանտ դրմինանտ գենը.

- 1) Քլայնֆելտերի սինդրոմի
- 2) ալբինիզմի
- 3) Մարֆանի սինդրոմի
- 4) Ֆենիլկետոնուրիայի

31

Ի՞նչ է ալեյոտրոպիան.

- 1) գեների բազմակի ազդեցություն
- 2) էպիստազ
- 3) գերդոմինանտություն
- 4) միջամկյալ ժառանգման երևույթ

32

Ինչպես է կոչվում փոխհարաբերությունների այն ձևը, որի դեպքում տեսակներից միայն մեկն է օգուտ ստանում՝ առանց վնասելու մյուս տեսակին.

- 1) մուտուալիզմ
- 2) ամենսալիզմ
- 3) կոռպերացիա
- 4) կոմենսալիզմ

33

Ինչի՞ արդյունքում կարող է տեղի ունենալ նոր տեսակների առաջացում նախկին արեալի ներսում նույն տեսակի պոպուլյացիաներից.

- 1) աշխարհագրական մեկուսացման
- 2) նողիքիկացիոն փոփոխականության
- 3) էկոլոգիական մեկուսացման
- 4) կոնվերգենցիայի

34

Ի՞նչն է ընկած տեսակի ձևաբանական չափանիշի հիմքում.

- 1) քրոմոսոմների թիվը
- 2) առանձնյակների ներքին և արտաքին կառուցվածքի նմանությունները
- 3) տեսակի գրաղեցրած արեալը
- 4) սպիտակուցների և նուկլեինաթթուների կառուցվածքն ու կազմը

35

Կենդանի նյութի ո՞ր ֆունկցիայի հետ է կապված ծծմքի և երկարի հանքերի առաջացումը.

- 1) կուտակող
- 2) միջավայրագոյացնող
- 3) էներգիական
- 4) դեստրուկտիվ

36

Ո՞ր պնդումն է ճիշտ գիշատչության վերաբերյալ.

- 1) գիշատիչները չեն կարող լինել երկրորդ կարգի կոնսումենտներ
- 2) գիշատիչ սնկերը չեն կարող ազդել հողում իրենց զոհերի՝ նեմատոդների թվաքանակի վրա
- 3) գիշատիչ բույսերը կարող են կարգավորել միջատների թվաքանակը
- 4) բույսերի գիշատչությունը զարգացել է որպես ազոտի և այլ կարևոր տարրերի մշտական անբավարարության փոխատուցման ձև

(37-38) Ծնողներն ունեն արյան II և III խմբեր: Նրանց առաջին երեխան ուներ արյան I խումբ: Այդ ընտանիքում ծնվեցին երկանգին երկվորյակներ:

37

Ինչպիսի՞ հավանականությամբ երկվորյակները կունենան արյան I խումբ.

- 1) 1\16
- 2) 1\2
- 3) 1\4
- 4) 1\8

38

Ինչպիսի՞ հնարավոր գենոտիպ ունի արյան II խումբ ունեցող ծնողը.

- 1) $I^0 I^0$
- 2) $I^A I^A$
- 3) $I^A I^0$
- 4) $I^A I^B$

(39-40) Սրտի բոլորաշրջանը տևում է 0,8 վրկ: Առողջ մարդու հարաբերական հանգստի վիճակում նախասրտերի քուլացման տևողությունը կազմել է 14 րոպե:

39

Քանի՞ րոպե է կազմում նախասրտերի կծկման տևողությունը այդ ընթացքում.

- 1) 14
- 2) 1,4
- 3) 2
- 4) 16

40

Այդ ընթացքում քանի՞ լիտր արյուն է մղվել մեծ շրջանառություն, եթե մեկ փորոքի կողմից շրջանառություն մղված արյան ծավալը 70 մլ է.

- 1) 168
- 2) 42
- 3) 70
- 4) 84

41

Ինչպիսի՞ համապատասխանություն գոյություն ունի մարդու օրգանիզմի կառուցվածքի առանձնահատկության (նշված է ձախ սյունակում) և էվոլյուցիայի ապացույցների (նշված է աջ սյունակում) միջև։ Նշել համապատասխանություններն ըստ հերթականության։

Կառուցվածքի առանձնահատկություն

Ապացույց

- A. մաշկային մկաններ
- B. պոչի առկայություն
- C. կույր աղիքի որդաննման ելուստ
- D. պոչուկ
- E. դեմքի խիստ մազածածկույթ
- F. լրացույցի պտուկներ
- G. երրորդ կոպի մնացորդ

- 1. ատավիզմ
- 2. ռուղիմենտ

42

Ո՞ր բնութագիրը (նշված է ձախ սյունակում) օրգանիզմների բազմացման ո՞ր ձևին է (նշված է աջ սյունակում) համապատասխանում։ Նշել համապատասխանություններն ըստ հերթականության։

Բնութագիր

Բազմացման ձև

- A. ինֆուզորիայի կոնյուգացիա
- B. կրկնակի բեղմնավորում
- C. զոռսպորների առաջացում
- D. սերմերի առաջացում
- E. գամետների առաջացում
- F. կուսածնություն
- G. կտրոններով բազմացում

- 1. սեռական բազմացում
- 2. անսեռ բազմացում

43

Ո՞ր հատկանիշը (նշված է ձախ սյունակում) գեների միջև փոխներգործության ո՞ր բնույթին է (նշված է աջ սյունակում) համապատասխանում: Նշել համապատասխանություններն ըստ հերթականության.

Հատկանիշ

Գեների փոխներգործության բնույթ

- | | |
|---|----------------------------|
| A. զիշերային գեղեցկուիի ծաղկի գույնը | 1. կորոմինանտություն |
| B. մարդու արյան խումբը | 2. գերոմինանտություն |
| C. բրախիդակտիլիան | 3. ոչ լրիվ դոմինանտություն |
| D. ոլոռի սերմերի գույնը | 4. լրիվ դոմինանտություն |
| E. լոլիկի որոշ սորտերի բարձր բերքատվությունը հետերոզիգոտ վիճակում | |
| F. ոլոռի սերմերի ձևը | |

44

Գլխուղեղի կեղևի ո՞ր գոտին (նշված է ձախ սյունակում) կեղևի ո՞ր մասին (նշված է աջ սյունակում) է համապատասխանում: Նշել համապատասխանություններն ըստ հերթականության.

Կեղևի գոտի

Կեղևի մաս

- | | |
|-----------------------------|------------------------------|
| A. շարժողական | 1. գագաթային բիլթ |
| B. խոսքի | 2. ճակատային բիլթ |
| C. տեսողական | 3. ծոծրակային բիլթ |
| D. մաշկամկանային զգայության | 4. քունքային բիլթ |
| E. լսողական | 5. քունքային բլթի ներքին մաս |
| F. հոտառական | |

45

Բաժանման ո՞ր պրոցեսը (նշված է ձախ սյունակում) բջջի բաժանման ո՞ր ձևին և փուլին (նշված են ազ սյունակում) է համապատասխանում: Նշել համապատասխանություններն ըստ հերթականության.

Բաժանման պրոցես

- A. սկսում է ձևավորվել բաժանման իլիկը, տեղի է ունենում հոմոլոգ քրոմոսոմների կոնյուգացիա և տրամախաչում
- B. ցենտրիուլները տարամիտվում են դեպի տարրեր քենաներ, սկսում է ձևավորվել բաժանման իլիկը, հոմոլոգ քրոմոսոմներն առանձին-առանձին են
- C. հապլոիդ թվով երկքրոմատիդային քրոմոսոմներն ապապարուրվում են
- D. հոմոլոգ քրոմոսոմները դասավորվում են մեկ հարթության վրա՝ կողք կողքի
- E. տեղի է ունենում ցիտոպլազմայի բաժանում, ձևավորվում են դիպլոիդ բջիջներ
- F. հոմոլոգ քրոմոսոմները դասավորվում են իլիկի հասարակածային գոտում՝ դեմ դիմաց

Բջջի բաժանման ձև և փուլ

1. մեյոզի առաջին բաժանման թելոֆազ
2. մեյոզի առաջին բաժանման պլոֆազ
3. միտոզի մետաֆազ
4. միտոզի պլոֆազ
5. մեյոզի առաջին բաժանման մետաֆազ
6. միտոզի թելոֆազ

46

Ինչպիսի՞ն է արյան հաջորդական ուղին ձկների արյունատար համակարգում՝ սկսած սիրտ մտնելու պահից: Նշել ճիշտ հաջորդականությունը.

1. փորոք
2. փորային առտա
3. դեպի սիրտ տանող երակներ
4. մեջքային առտա
5. նախասիրտ
6. խոիկային թերթիկների մազանոթներ
7. ներքին օրգանների մազանոթներ

47

Ի՞նչ հաջորդականությամբ է մքնողորտային քրվածինն անցնում մարդու քջիցներ՝ սկսած ներշնչման պահից: Նշել ճիշտ հաջորդականությունը.

1. քրվածնի դիֆուզում ներքին օրգանի քջի բջջաթաղանթով
2. օքսիհեմոգլոբինի փոխադրում արյան կազմում մեծ շրջանի անոթներով
3. օքսիհեմոգլոբինի առաջացում
4. օղի թափանցում թոքաբջտեր
5. քրվածնի դիֆուզում մազանոթների պատով
6. քրվածնի դիֆուզում թոքաբջտերի պատով
7. քրվածնի անջատում հեմոգլոբինից

48

Ի՞նչ հաջորդականությամբ է ազդակն անցնում ռեֆլեքսային աղեղով մարդու օրգանիզմում: Նշել ճիշտ հաջորդականությունը.

1. ողնուղեղի առջևի եղջյուր
2. շարժողական նեյրոնի արտոն
3. ներդիր նեյրոն
4. զգայական նեյրոնի դենդրիտ
5. գործառող օրգան
6. զգայական նեյրոնի արտոն
7. ընկալիչ
8. ողնուղեղային հանգույց

49

Ի՞նչ հաջորդականությամբ են իրականանում արյան մակարդման գործընթացները մարդու օրգանիզմում: Նշել ճիշտ հաջորդականությունը.

1. քրոմբի առաջացում
2. արյունատար անոթի պատի վնասում
3. ֆիբրինոգենի բնափոխում
4. քրոմբոցիտների քայրայում
5. ֆիբրինի առաջացում
6. քրոմբոցիտների հպում արյունատար անոթի անհարթ մակերևույթին
7. արյան պլազմայի մեջ քրոմբինի արտազատում

50

Ինչպիսի՞ն է արյունատար համակարգի անոթների ճյուղավորման հաջորդականությունը մարդու արտազատության համակարգում: Նշել ճիշտ հաջորդականությունը.

1. մազանոթների միացում
2. արտատար զարկերակի ճյուղավորում մազանոթների
3. մանր զարկերակների առաջացում
4. երիկամային զարկերակի ճյուղավորում
5. երիկամային երակի առաջացում
6. առբերող զարկերակի ճյուղավորում մազանոթների
7. փոքր լուսանցքով երակի առաջացում

51

Ինչպիսի՞ն է ֆոտոսինթեզի նշված գործընթացների հաջորդականությունը.

1. ջրի ֆոտոլիզ (քայքայում)
2. գոգոված էլեկտրոնի անցում փոխադրիչ մոլեկուլի վրա
3. քլորոֆիլի մոլեկուլի վերականգնում
4. ատոմային ջրածնի առաջացում
5. քլորոֆիլի մոլեկուլից էլեկտրոնի անջատում
6. քլորոֆիլի մոլեկուլի գրգռում
7. գլյուկոզի առաջացում

52

Նշել բոլոր ճիշտ պնդումները.

1. Վերլուծող խաչասերման ժամանակ անհայտ գենոտիպ ունեցող առանձնյակը խաչասերում են դրմինանտ գենով առանձնյակի հետ
2. դրոզֆիլ պտղաճանճի աչքի գույնը սերի հետ շղթայակցված հատկանիշ է, որը պայմանավորող գենը տեղակայված է Y քրոմոսոմում
3. Սորգանի օրենքը վերաբերում է գեների շղթայակցմանը
4. առաջին սերնդում 1:1 հարաբերությունն ըստ ֆենոտիպի ստացվում է այն դեպքում, եթե ծնողական առանձնյակներից մեկը հոմոզիգոտ է՝ ըստ ռեցեսիվ ալելի, մյուսը՝ հետերոզիգոտ
5. Սենդելի անկախ բաշխման օրենքը վերաբերում է միայն այն հատկանիշների ժառանգմանը, որոնց պայմանավորող գույգ ալելային գեները գտնվում են տարբեր գույգ հոմոլոզ քրոմոսոմներում
6. Երկինական առանձնյակների խաչասերման արդյունքում, գույգ ալելների լրիվ դրմինանտության և գեների անկախ բաշխման դեպքում սերնդում դիտվում է 9:3:3:1 ճեղքավորում՝ և ըստ գենոտիպի, և ըստ ֆենոտիպի

53

Նշել բոլոր ճիշտ պնդումները.

1. հողվածուտանիների խիտինային ծածկույթին առանձին խրձերի ձևով ամրանում են միջաձիգ-զոլավոր մկանները
2. կաթնասունների մազերը, սողունների թեփուկները, թռչունների փետուրները կազմված են եղջերային նյութից
3. ձկների ողնաշարում տարբերում են երեք բաժիններ՝ պարանոցի, իրանի, պոչի
4. կաթնասունների ձվաբջջի բեղմնավորումը տեղի է ունենում արգանդում
5. թռչունների կտցոսկրերը ազատություն են տալիս թևերի շարժմանը
6. անձրևորդի կերակրափողի մեջ բացվում են կրային գեղձերի ծորանները
7. սողունների հաստ աղին վերջանում է կտնառով, որտեղ բացվում են արտազատական և սեռական օրգանների ծորանները

54

Նշել մարդու օրգանիզմի կառուցվածքին կամ այնտեղ իրականացվող գործընթացներին վերաբերող բոլոր ճիշտ պնդումները.

1. ողնուղեղի կրծքային հատվածներից ուղարկվող նյարդային ազդակները հանգեցնում են մարսողական գեղձերի ծորանների նեղացմանը, մարսողական ուղու մկանունքի կծկումների բուլացմանը
2. ըմպանը մկանային օրգան է, որի պատերին գտնվում են լսողական փողերի անցքերը, որոնք կապում են ըմպանը ներքին ականջի խոռոչի հետ
3. կերակրափողը եռաշերտ պատերով սնամեջ խողովակ է
4. կլման ընթացքում մարսողական ուղու մուտքը փակվում է մակլուկորդով
5. պեպսինը և տրիպասինը գործում են թթվային միջավայրում, իսկ ամիլազը՝ հիմնային
6. թուրք անգույն, թույլ թթվային ռեակցիա ունեցող հեղուկ է, որը մասնակցում է սպիտակուցների ճեղքմանը

55

Նշել բոլոր ճիշտ պնդումները.

1. քրոմատինի հիստոնային սպիտակուցները հարուստ են արգինին և լիզին ամինաթթունների մնացորդներով, ինչը այդ սպիտակուցներին տալիս է թթվային հատկություններ
2. Գոլջիի ապարատը բնորոշ է բոլոր կորիզավոր բջիջներին և ունի ցանցանման կառուցվածք
3. ծխախոտի խճանկարային հիվանդություն հարուցող վիրուսի մասնիկը ձողաձև է, իսկ ծխախոտի ներկողի վիրուսը գնդիկային տեսքով կառույց է
4. քլորոֆիլը քիմիական կառուցվածքով պորֆիրին է, որի բաղադրության մեջ մտնում է երկարը
5. այն երևույթը, երբ բջջում մեկ վիրուսի առկայությունը հաճախ պաշտպանում է բջջը այլ վիրուսի ներթափանցումից, կոչվում է ինտերֆերենցիա
6. կորիզահյութը իր քիմիական կազմով չի տարբերվում ցիտոպլազմայի բաղադրությունից

Նշել բոլոր սխալ պնդումները.

1. ԴՆԹ-ի մեկ շղթայում նույնագույն միմյանց են միանում մեկ նույնագույն ֆունդումենտալ հարաբերությունները միմյանց են միանում մեկ նույնագույն կապով
2. բջջում ջուրը թթվածնի և ջրածնի աղբյուր է
3. զյուկողի՝ մինչև պիրոխաղողաթթվի ճեղքածան արդյունքում անջատվում է 150 կԶ/մոլ էներգիա, որի մեծ մասը (60 %) վերածվում է ԱԵՖ-ի մակրոէրգիկ կապի էներգիայի, իսկ մյուս մասը (40 %) գրվում է որպես ջերմային էներգիա
4. քլորոֆիլը հիմնականում կլանում է կարմիր և կապտամանուշակագույն լույսը, իսկ կանաչն անդրադարձնում է, որի պատճառով բույսերը հիմնականում կանաչ գույն ունեն
5. մկանային բջիջների ցիտոպլազմայում պահպանվում է կալցիումի իոնների շատ բարձր խտություն՝ հատիկավոր էնդոպլազմային ցանցի կազմավորած սարկոպլազմային ցանցի շնորհիվ
6. էներգիական փոխանակության թթվածնային փուլում, եթե պրոտոնային պոտենցիալը միտոքոնդրիումների թաղանթի երկու կողմերում հասնում է որոշակի սահմանային մեծության, ջրածնի պրոտոններն էլեկտրական դաշտի ազդեցության տակ մղվում են ԱԵՖ-սինթազի անցուղու միջով՝ ներքին մակերևույթից դեպի թաղանթի արտաքին կողմը

Նշել մարդու օրգանիզմի կառուցվածքին կամ այնուեղ իրականացվող գործընթացներին վերաբերող բոլոր սխալ պնդումները.

1. արյան ամենափոքր ճնշումը դիտվում է մազանոթներում
2. վահանածն գեղձի հորմոնի անբավարարությունը մանկական հասակում առաջ է բերում գաճաճություն հիվանդությունը
3. ենթաստամոքսային գեղձի զյուկագոն հորմոնն արյան մեջ զյուկողի հավելյալ քանակը դարձնում է զլիկոգեն
4. ոչ պայմանական ռեֆլեքսների իրականացման համար պարտադիր է զլխուղեղի մեծ կիսագնդերի կեղևի մասնակցությունը
5. բոքերը մկանային օրգաններ են, որոնք պասիվ կերպով հետևում են լայնացող կրծքավանդակի պատերին
6. կոկորդի ներքին պատը պատված է թարթիչավոր ծածկութային հյուսվածքով
7. թարթիչավոր մարմնի մկանները փոխում են ակնաբյուրեղի կորությունը

58

Նշել բոլոր սխալ պնդումները.

- բնական էկոհամակարգերի կայունության հիմնական պատճառն էներգիայի հոսքի և նյութերի շրջապտույտի հավասարակշռվածությունն է
- բնական ընտրությունն ունի ուղղորդված բնույթ
- կայունացնող ընտրությունը հանգեցնում է ռեակցիայի նորմայի փոփոխմանը մեկ որոշակի ուղղությամբ
- մակրոէվոլյուցիայի հիմքում ընկած են ժառանգական փոփոխականությունը, գոյության կոհիվը և բնական ընտրությունը
- դիվերգենցիան նոր տեսակների և դրանց հեռավոր նախնիների միջև սկզբում հազիվ նկատելի տարբերությունների անընդհատ մեծացող և խորացող գործընթաց է
- արտաքինից միանման և միևնույն ֆունկցիա կատարող, բայց տարբեր ծագում ունեցող օրգանները կոչվում են հոմոլոգ օրգաններ

59

Փոքր լճակում ձկների քանակը որոշելու համար որացել են 750 ձուկ, նշան արել և նորից բաց քողել լիճ: Որոշ ժամանակ անց որացել են 2700 ձուկ, որից 54-ը նշված էին: Գտնել պոպուլյացիայի մոտավոր քվաքանակը:

(60-61) Օրգանիզմում գլիկոլիզի ընթացքում անջատված ջերմային էներգիայի 21%-ը ծախսվել է 0,3 կգ քրտինք գոլորշիացնելու համար: Օրգանիզմում կուտակվել է 28 մոլ կաթնաբբու: Ընդունել, որ 1 մոլ գլյուկոզից մինչև կաթնաբբու ճեղքման ընդհանուր էներգիան կազմում է 200 կՋ և ԱԵՖ-ի մինչև ԱՎՖ ճեղքման արդյունքում անջատվում է 30 կՋ/մոլ էներգիա և 1 գ քրտինքի գոլորշիացման համար օրգանիզմը ծախսում է 2,45 կՋ էներգիա:

60

Քանի՞ մոլ CO₂ է առաջացել այդ պրոցեսի արդյունքում:

61

Որքա՞ն օգտակար էներգիա է կուտակվել (կՋ-ով) այդ պրոցեսի արդյունքում:

(62-63) 200 օրվա ընթացքում (միջինը 15-ժամյա լուսային օր) ֆոտոսինթեզի պրոցեսում արտադրվել է 64 կգ O_2 :

62

Գտնել ծառի տերևային մակերևույթի մակերեսը (m^2):

63

Որքա՞ն օրգանական նյութ (գլյուկոզ) է սինթեզվել այդ ընթացքում (կգ):

(64-66) Սպիտակուցի զանգվածը 74750 գ.ա.մ. է:

64

Քանի՞ անգամ է այդ սպիտակուցի սինթեզը կողավորող գենի զանգվածը գերազանցում սպիտակուցի զանգվածը, եթե մեկ ամինաքրվային մնացորդի միջին մոլեկուլային զանգվածը 115 գ.ա.մ. է, մեկ նուկլեոտիդինը՝ 310 գ.ա.մ.։
Պատասխանում պահպանել միայն ամբողջ քիվը:

65

Քանի՞ նմ է տվյալ գենի երկարությունը, եթե մեկ նուկլեոտիդի երկարությունը ԴՆԹ-ի շղթայում 0,34 նանոմետր է:

66

Քանի՞ աղենինային նուկլեոտիդ կա տվյալ գենում, եթե հայտնի է, որ գուանինային նուկլեոտիդների քիվը 2,9 անգամ մեծ է աղենինային նուկլեոտիդների քվից։

(67-68) Մարդը 48,816 մ³ ծավալով աշխատասենյակում գտնվել է 10 ժամ: Այդ ընթացքում կատարել է ֆիզիկական աշխատանք 9 ժամ: Աշխատանքի ժամանակ շնչառական շարժումների հաճախականությունն աճել է 1,6 անգամ, շնչառական ծավալը՝ 1,5 անգամ, իսկ օրգանիզմում յուրացվող թթվածնի ծավալը աճել է 25%-ով: Ընդունել, որ սենյակը մեկուսացված է, հարաբերական հաճախտի վիճակում մարդը 1 րոպեում արքուն ժամանակ կատարում է 18 շնչառական շարժում:

67

Սենյակի օղի քանի՞ սոոկոսն է ներշնչել մարդը այդ 10 ժամվա ընթացքում:

68

Քանի՞ լիտր թթվածին է յուրացվել մարդու օրգանիզմում այդ 10 ժամվա ընթացքում:

69

Մարդու օրգանիզմի կառուցվածքին կամ այնտեղ իրականացվող գործընթացներին վերաբերող տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել «Ծիշտ է», «Սխալ է», «Զգիտեմ» պատասխաններից մեկը.

1. միջկողային և ստոձանու մկանների թուլացման ժամանակ կողոսկրերն ու ստոձանին իջնում են և տեղի է ունենում արտաշնչում
2. մարդու լրացուցիչ կմախքը կազմված է վերջույթների գոտիներից և ազատ վերջույթների կմախքից
3. միջաձիգ-զոլավոր մկանային հյուսվածքը կազմված է մանր, իլիկաձև, միակորիգ բջիջներից
4. ողնաշարի պարանոցային և սրբանային կորուքյուններն ուղղված են դեպի առաջ
5. շարժման ընթացքում ավելի սակավաշարժ ուկրերին միացող ջիլն անվանում են մկանի պոչ, իսկ շարժուն ուկրերին միացողը՝ մկանի գլխիկ
6. մարդու կրծքավանդակում կողոսկրերը շարժուն միացած են կրծոսկրին

70

Օվոգենեզի վերաբերյալ տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել «Ծիշտ է», «Սխալ է», «Զգիտեմ» պատասխաններից մեկը.

1. 1n2c հավաքակազմ ունեցող խոշոր բջիջը կոչվում է երկրորդ կարգի օվոցիտ, իսկ փոքր բջիջը՝ ուղղորդող մարմին
2. Երկրորդ կարգի օվոցիտի երկրորդ բաժանումը մեյոզի ընթացքում կանգ է առնում այրոֆազում և շարունակվում է մինչև վերջ միայն ձվագատման պահին
3. առաջին կարգի օվոցիտներն ունեն քրոմոսոմների 4n4c հավաքակազմ
4. ձվարանների բազմացման գոտու 2n2c հավաքակազմով բջիջները կոչվում են օվոգրնիումներ
5. առաջին կարգի օվոցիտը միտոզով կիսվելով՝ վերածվում է երկրորդ կարգի օվոցիտի
6. մեյոզի առաջին բաժանումից առաջանում են երկու անհավասար հապլոիդ բջիջներ